Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի» համար ՖՏ 2018.

Սիսիան քաղաքում աղբի տեսակավորման համար աղբամանների տրամադրման ծրագրի ստորագրման արարողությունը

2019 թ. մարտի 27-ին ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունում տեղի ունեցավ «Սիսիան քաղաքում աղբի տեսակավորման համար աղբամանների տրամադրման ծրագրի» 19,914 ԱՄՆ դոլար (2,230,368 ճապոնական իեն) արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Դրամաշնորհային պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Ջուն Յամադայի և «ՈՒՐԲԱՆ» կայուն զարգացման հիմնադրամի (ՈՒԿԶՀ) գործադիր տնօրեն տիկին Նունե Ղազախեցյանի կողմից: Ստորագրման արարողությունը տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ պարոն Վաչե Տերտերյանի և Սյունիքի մարզպետ պարոն Հունան Պողոսյանի ներկայությամբ:

Ծրագրի նպատակն է Սիսիան քաղաքին տրամադրել խառը թափոնների համար 65 աղբամաններ, որոնք թույլ կտան աղբը արդյունավետ տեսակավորել պլաստիկ և այլ թափոնների: Դրանց օգնությամբ ակնկալվում է բարելավել թափոնների կառավարման և վերամշակման հզորությունը այս քաղաքում, որտեղ բնակվում է 16 հազար քաղաքացի: Արդյունքում, ակնկալվում է նաև, որ կբարելավվեն Հայաստանի հարավ-արևելյան հատվածում աղբահանության և թափոնների հեռացման խնդիրներին առնչվող սոցիալական հարցերը և աղբի տեսակավորման և վերամշակման միջոցով կխթանվի շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված գործունեությունը:

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջին տեղակալ պարոն Վաչե Տերտերյանի ողջույնի խոսքը

Դեսպան Յամադայի շնորհավորական ուղերձը

Դեսպան Յամադան և ՈՒԿԶՀ-ի գործադիր տնօրեն տիկին Ղազախեցյանը ստորագրում են դրամաշնորհի պայմանագրերը